ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/20» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի նիստ
(Տպագիր նյութեր և հարակից արտադրանք)

ք. Երևան 05 դեկտեմբերի 2017թ. Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի բանակցությունների նիստ

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-17/20» ծածկագրով գնման ընթացակարգի N 2 և N 3 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով ոչ գնային պայմաններին բավարար գնահատված հայտ ներկայացրած «Միսմա» ՍՊԸ մասնակիցը հրավիրվել է առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների:
«Միսմա» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ գնման ընթացակարգի N 2 և N 3 չափաբաժինների մասով, որոնք չեն գերազանցում գնման առարկայի ձեռքբերման նախահաշվային արժեքները: (Կից ներկայացվում է «Միսմա» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը):
Գնահատող հանձնաժողովի անդամները քննարկեցին վերը նշված հանգամանքները և կայացրեցին որոշում՝

1. «Միսմա» ՍՊԸ մասնակցին «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-17/20» ծածկագրով գնման ընթացակարգի N 2 և N 3 չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:
2. Ելնելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջներից, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում «Միսմա» ՍՊԸ մասնակցին սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնել ընկերության կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով նախատեսված հավելված N 6 և հավելված N 6.1-ի:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Հաստատել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

2.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել N 1 և 5 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ մասնակցի և N 2 , 3 և 4 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Միսմա» ՍՊԸ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ստանալուց հետո:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Թ. Զաքարյան
	_____	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ա. Պետրոսյան